ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 220-Ա

<<30>> հոկտեմբերի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ (ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-22) ԱԶԱՏՈՒՀԻ ԱՂԱՍՈՒ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 03-ի N 322-Ա կարգադրությունը և <<Գյումրու բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 29-ին տրված՝ սերիա ZZ N 000833 անաշխատունակության թերթիկը **հրամայում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-22) Ազատուհի Աղասու Խաչատրյանին տրամադրել հղիության և ծննդաբերության արձակուրդ:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-22) Ազատուհի Աղասու

Խաչատրյանին 2024 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև 2025 թվականի մարտի 16-ը ներառյալ՝ ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար նշանակել մայրության նպաստ:

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկումն ու վճարումը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

<<30>> հոկտեմբերի 2024 թվական
Գյուղ Ախուրյան